«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ՝ ԽՈՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2021

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է (վերակազմակերպվել է) 02.10.2018 թ-ին՝ ՀՖՖ Ժողովի 22.09.2018թ.-ին կայացված որոշմամբ:

Կազմակերպության պետական գրանցման վկայականի համարն է՝ 211.171.1039517:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Հայաստանր ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նպատակներն են ու խնդիրներն են (ըստ կազմակերպության կանոնադրության).

1. *Շարունակաբար զարգացնել ֆուտբոլ խաղը, խթանել, կանոնակարգել և վերահսկել այն ՀՖՖ-ի իրավասության ներքո գտնվող ողջ տարածքում՝ արդար խաղի և դրա միավորող, կրթական, մշակութային և մարդասիրական արժեքների լույսի ներքո՝ դա իրականացնելով մասնավորապես երիտասարդական, մանկապատանեկան և զարգացման ծրագրերի միջոցով,*

2. *կազմակերպել ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի ազգային առաջնություններ՝ հստակ սահմանելով տարբեր Լիգաներին (եթե այդպիսիք կան) տրված լիազորությունների շրջանակը,*

3. *կազմել կանոնակարգեր և կանոններ և ապահովել դրանց կիրառումը,*

4. պաշտպանել իր Անդամների շահերը.

5. հարգել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրությունները, կանոնակարգերը, կարգադրությունները և որոշումները և կանխել դրանց, ինչպես նաև Խաղի կանոնների որևէ խախտում և ապահովել Անդամների կողմից այդ կանոնների պահպանումը.

6. խթանել բարեվարքությունը, էթիկան և արդար խաղի կանոնները՝ նպատակ հետապնդելով կանխարգելելու խախտումների բոլոր մեթոդներն ու գործողությունները, ինչպիսիք են կոռուպցիան, դոպինգի օգտագործումը կամ պայմանավորված խաղերը, ինչը կարող է վտանգել խաղերի, առաջնությունների, խաղացողների, պաշտոնատար անձանց և անդամների բարեվարքությունը կամ հանգեցնել Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի կամ լողափնյա ֆուտբոլի ոլորտում չարաշահումների, և այլն:

7. խթանել կանանց ֆուտբոլի զարգացումը և ֆուտբոլի ղեկավարման բոլոր մակարդակներում կանանց լիարժեք մասնակցությունը.

8. վերահսկել և ղեկավարել Հայաստանի տարածքում անցկացվող բոլոր տեսակի ֆուտբոլային ընկերական խաղերը.

9. ազգային մակարդակում վերահսկել և ղեկավարել Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի կամ լողափնյա ֆուտբոլի խաղերը և վերահսկել և ղեկավարել Հայաստանի տարածքում անցկացվող բոլոր տեսակի միջազգային ֆուտբոլային խաղերը՝ համաձայն ՖԻՖԱ-ի և Կոնֆեդերացիաների համապատասխան Կանոնադրությունների և կանոնակարգերի.

10. ապահովել միջազգային մարզական հարաբերությունները Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի կամ լողափնյա ֆուտբոլի ոլորտներում.

11. հյուրընկալել և անցկացնել միջազգային և ազգային առաջնություններ.

12. ապահովել ՀՖՖ գործունեության և ֆինանսական տարեկան հաշվետվությունների թափանցիկությունը և հրապարակայնությունը.

13. իրականացնել իր կանոնադրական նպատակներին համապատասխան և օրենքով չարգելված այլ գործունեություն:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կանոնադրությամբ, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով, կարգադրություններով, որոշումներով և այլ իրավական ակտերով:

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Արմեն Մելիքբեկյան – Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Նախագահ

   Արմեն Նիկողոսյան – Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Փոխնախագահ

   Արթուր Ազարյան – Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Գլխավոր քարտուղար

   (ղեկավար կազմի անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն)

2. Ընդհանուր թվով 90 մշտական աշխատող,

   (մշտական աշխատողների անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն)

3. Վահան Բերակչյան – ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ

   Կարեն Մնացականյան – ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի պետ

   (ծրագրի իրականացման համար ներգրավված անձանց անուն, ազգանուն, հայրանուն, մասնագիտացում)

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

« Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա » հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են՝

1. ֆուտբոլ

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նկարագրությունը և նպատակը

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան՝ Ա. Մանուկյան 11 հասցեում գտնվող 0.47 հեկտար մակերեսով հողատարածքը նվիրաբերությամբ ստանալու պարագայում, պլանավորում է վերոնշյալ տարածքը միավորել Վարդանանց 65 հասցեում գտնվող՝ արդեն իսկ ՀՖՖ-ին պատկանող տարածքի հետ և նշված մեկ ամբողջական տարածքում իրականացնել Խորեն Հովհաննիսյանի անվան ֆուտբոլի դպրոցի կառուցումը, որը ընդգրկելու է երկհարկանի շինություն և մեկ արհեստական խոտածածկով ֆուտբոլի խաղադաշտ՝ համապատասխան ենթակառուցվածքներով: Ակնկալվում է, որ վերոնշյալ ֆուտբոլի դպրոցը ունենալու է 300 սան, դպրոցում աշխատելու են 6 ֆուտբոլի մարզիչներ, ինչպես նաև 5 ադմինիստրատիվ կազմի աշխատակիցներ:

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել՝

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի 2019-2025թթ. Ռազմավարությունը՝ ընդունված ՀՖՖ Ժողովի կողմից 2019 թվականի հունիսի 26-ին,

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա տարիների համար կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. UEFA (Union of European Football Associations) – ՈՒԵՖԱ – Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միություն – UEFA HatTrick ներդրումային ծրագիր 600.000 Եվրո,

(նշել ֆինանսավորող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն

և ֆինանսավորման չափը՝ ըստ տարիների)

2. ՀՖՖ Բյուջե – 160.000 Եվրո

Սույն ծրագրի ընդհանուր արժեքը առաջիկա 10 տարվա համար կազմում է 760.000 Եվրո, որից 600.000 Եվրո գումարը ՀՖՖ-ն ներդնելու է ՈՒԵՖԱ-ի կողմից ստացված HatTrick ներդրումային ծրագրի ֆոնդից, իսկ մնացած 160.000 Եվրոն՝ սեփական բյուջեից:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Խորեն Հովհաննիսյանի անվան ֆուտբոլի դպրոցի շինարարությունը պլանավորվում է ավարտել մինչև 2022թ դեկտեմբեր ամիսը: Շինարարության ավարտից անմիջապես հետո դպրոցը կշահագործվի:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 10 տարիներին «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

Ծրագրի իրականացման 1-ին և 2-րդ տարիների ընթացքում կատարվելու են նախագծային աշխատանքները, սեյսմիկ և գեոդեզիական ուսումնասիրությունները, կապալառուի ընտրություն, ֆուտբոլի դպրոցի երկհարկանի մասնաշենքի շինարարություն, արհեստական խոտածածկով խաղադաշտի հիմքի պատրաստում և խոտածածկի տեղադրում, տարածքի բարեկարգում և կանաչապատումը, ընդհանուր առմամբ՝ կազմակերպվելու է ամբողջ ծրագրի շինարարության նախապատրաստման և բուն շինարարության գործընթացը, և ծրագրի 2-րդ տարվա ավարտին մարզահամալիրը կհասցվի նախագծված վերջնական տեսքին:

1-ին և 2-րդ տարիների համար ընդհանուր նախատեսված է ծրագրի արժեքից ծախսել 600.000 Եվրո: Հետագա՝ 3-րդից մինչև 10-րդ տարիների ընթացքում կատարվելու է մարզադաշտի ենթակառուցվածքների և խաղադաշտի ընթացիկ խնամքը, բարեկարգումը և վերանորոգումը, որի վրա ծախսվելու է տարեկան 20.000 Եվրո:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը կապահովի Երևանի և ամբողջ հանրապետության տարբեր համայնքներից և բնակավայրերից ժամանած 300 պատանի ֆուտբոլիստների ֆոտբոլային ուսուցումը:

Նշված ֆուտբոլի դպրոցի շինարարությունը թույլ կտա արհեստական խոտածածկով խաղադաշտում անցկացնել նաև Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից կազմակերպված տարբեր մարզական միջոցառումներ, այդ թվում՝ ֆուտբոլի մասսայականացմանն ու առողջ ապրելակերպին ուղղված միջոցառումներ:

Ծրագիրը հաստատված է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության Նախագահի կողմից:

ՀՖՖ Նախագահ՝

Ա. Մելիքբեկյան